

— Ահա վիճակը, պատուական բարեկամներ, ես չեմ կրնար անօգնական թողո՞ղ դրացի գաւառ մը, որուն բոլոր բնակիչքը հայ են եւ ինձի կը դիմեն, ոչ միայն իբրեւ հայու այլեւ Բագրատունուոյ, վասնզի ինչպէս ձեզ յայտնի է՝ այս գաւառը անյիշատակ ժամանակներէ ի վեր Բագրատունեաց առաջին սեփականութիւնն է:

— Ո՞վ է տէր երկրին, ո՞վ գրէր է այդ, ո՞վ ստորագրէր այդ նամակին,— հարցուց Գուրգէն:

— Ստորագրողը «Վասկանուշ Բագրատունի, մայրապետ Աստուածամայր վանուց Արտանուշի»: Այս կինը հօրեղբօր գաւակն է Սպարապետին, հռչակաւոր իմաստութեամբ եւ առաքինութեամբ, Տայոց եւ թէ Բարձր Յայոց նահանգներու մէջ:

— Ի՞նչ կեցեր կը դանդաղինք, երթանք,— ըսաւ Աշոտ եւ ոտք ելաւ:

— Կեցցէ՛ս Աշոտ,— կ'ըսէր Գուրգէն ծիծաղելով,— այս կինն էլ դի՛ր քու միւս կնոջ քով, որու կենաց մեզ երէկ գինի խմցուցիր:

— Նոյն կինն է՛, պէտք չէ ժամանակ կորսնցնել,— կ'ըսէր:

Այս բոլոր խօսակցութեանց մէջ խոսքով, որ բերան չի բացաւ, զիովնան կը գնէր, որ Վասկանուշ անունին փոքրիկ աննշմարելի ցնցում մը միայն ունեցաւ. իսկ անկից վերջ անխռով էր քարէ արձանի պէս:

— Երթանք ուրեմն,— կ'ըսէր Գուրգէն ծիծաղելով բարձրաձայն.— ի՞նչ կ'ըսես Յովնան, մե՛ղք է այս տղան, տեսէ՛ք, զենքերն արդէն առաւ եւ սաղաւարտը կը դնէ:

— Երթանք,— ըսաւ Յովնան եւ դուրս ելաւ:

Ժամ մը չեղած չորս հարիւրի չափ հետեւակ եւ ձիաւոր Արամանեակ բերդէն կ'ելնէին երկու օրուան պաշար առած եւ Արտանուշի վրայ կ'արշաւէին արագութեամբ: Գիշեր մը հանգիստ առած երկրորդ օրը